https://www.theguardian.com/commentisfree/2020/oct/11/the-observer-view-on-nagorno-karabakh

The Observer –ի տեսակետը Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ

Քանի դեռ աշխարհի խոշոր տերությունները քայլեր չեն ձեռնարկում, այս անկայուն հրադադարը հազիվ թե պահպանվի:

- *Աղավնիները թռածում եմ Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտի Սուրբ Աստվածածին եկեղեցու մոտ այն օրը, երբ Հայաստանն ու Ադրբեջանը հրադադարի կնքման վերաբերյալ համաձայնության եկան:*

Այն փաստը, որ Ադրբեջանն ու Հայաստանը համաշխարհային լուրջ ճգնաժամի պայմաններում կրկին պատերազմում են, խորը տագնապ է առաջացնում: Մարտ ամսին ՄԱԿ-ը կոչ էր արել համընդհանուր զինադադար հաստատել՝ օժանդակելով համավարակի դեմ ընթացող ծանր պայքարին: Սակայն այս կոչը լիովին անտեսվել է: Հարավային Կովկասում ընթացող հակամարտությունը կրկնում է Մերձավոր Արևելքի մի շարք երկրներում շարունակվող անմարդկային բռնությունները, որտեղ

կարծես թշնամանքը հաղթում է պատերազմն իր հիվանդությունը դարձրած մարդկությանը:

Հայաստանի վերահսկողության տակ, բայց Ադրբեջանի տարածքում գտնվող Լեռնային Ղարաբաղի դեմ անցյալ ամիս վերսկսված ռազմական բռնկումը, որը հանգեցրել է հազարավոր խաղաղ բնակիչների մահվան և տեղահանման, վառ կերպով ընդգծում է միջազգային կանոնների վրա հիմնված կարգերի փլուզմանը բնորոշ վտանգները: Տարածաշրջանային տերություններն ի սկզբանե չէին միջամտում այս հարցին, իսկ Թուրքիան կրակի վրա յուղ էր լցնում: Եվրամիությունը պարզապես հետևում էր, թե ինչպես է պատերազմն ընդգրկում նաև իր սահմանները, իսկ ԱՄՆ-ը բացարձակ անտարբեր էր:

Ուրբաթ օրը Մոսկվայում կայացած բանակցությունների արդյունքում համաձայնեցված մարդասիրական հրադադարը անդունդից հետընթաց առաջին քայլն է, սակայն նախադեպերը հուսադրող չեն: Լեռնային Ղարաբաղի համար ընթացող եռամյա պատերազմից հետո 1994 թվականին համաձայնեցված հրադադարի ռեժիմը բազմիցս խախտվել է: Վերջին բախումները ուղեկցվել են քաղաքացիական տների անխնա ռմբակոծություններով, անօդաչու թռչող սարքերի հարվածներով ու, ինչպես հաղորդվում է, կասետային զինամթերքի օգտագործմամբ:

Այս բռնկումը հատկապես ընդգծում է այն փաստը, թե որքանով է Ռուսաստանը դեռ պահպանում իր ազդեցությունը տարածքներում, որոնք հետխորհրդային առաջնորդները սիրում են կոչել իրենց «մերձավոր արտասահմանը»: Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը, որը հրապարակավ սգում էր Խորհրդային Միության փլուզումը, այժմ հմտանում է արևմտյան ժողովրդավարական երկրների միջև անկայունության և տարաձայնությունների սերմանման գործում: Սակայն վերջին շաբաթներին նա ստիպված էր պարզապես հետևել, թե ինչպես են զինված բախումներ ծավալվում Ռուսաստանի «թիկունքում»:

Պուտինը սխալ հաշվարկներ կատարեց, երբ անձնական աջակցություն առաջարկեց ևս մեկ Խորհրդային հանրապետության՝ Ղրղզստանի նախագահին՝ ցուցարարների կողմից երկրի կառավարությունը տապալելուց կարճ ժամանակ առաջ: Պուտինի քննադատները նաև մատնանշում են վերջինիս՝ Ուկրաինայում իր

ազդեցությունը հաստատելու անկարողությունը՝ չնայած 2014թ.-ի զինված միջամտությանն ու Ռուսաստանի հեռավոր արևելքում ժողովրդական հուզումներին:

Զարմանալի չէ, որ Պուտինը ձգտում է կանխելու Ռուսաստանի դաշնակից Հայաստանի ու Ադրբեջանի՝ նավթ և գազ արտահանող ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող երկրի միջև հարաբերությունների հետագա սրացումը:

Թուրքիայի ներգրավվածությունը ղարաբաղյան հակամարտության մեջ միանգամայն անտեղի էր: Մերձավոր հարևանների միջև որպես միջնորդ հանդես գալու փոխարեն Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը անսահմանափակ աջակցություն առաջարկեց իր ադրբեջանցի դաշնակիցներին, ինչն էլ ուղղվեց Հայաստանի դեմ: Նրա արձագանքն արտացոլում է էթնիկ և կրոնական հին թշնամանք: Սա նաև համընկնում էր Թուրքիայի՝ տարածաշրջանային ազդեցության ոլորտն ընդլայնելու ավելի լայն քաղաքականությանը:

Այս քաղաքականությունը Սիրիայում և Լիբիայում հանգեցրել է թուրքական ռազմական միջամտության, իսկ վերջերս՝ արևելյան միջերկրածովյան տարածաշրջանում՝ ռազմատենչության, որը հիմնականում ուղղված էր Թուրքիայի ՆԱՏՕ-ական դաշնակից Հունաստանի դեմ: Սա նաև միտված էր հակազդելու տնտեսական խնդիրներին և ներքուստ աճող քաղաքական ընդդիմությանը: Թուրքիան հերքում է Ադրբեջան վարձկաններ ուղարկելը, սակայն իր միջամտությունը, անկասկած, սրել է լարվածությունը:

Ուրբաթ օրը Թուրքիայի՝ հայկական զորքերը Լեռնային Ղարաբաղից դուրս բերելու պահանջը կարող է խաթարել հրադադարի ռեժիմը:

Այս ողբերգության մյուս մասնակիցները նույնպես պատշաճ պատասխանատվություն չեն ցուցաբերել: Երկար «մխացող» այս պայքարը («սառեցված հակամարտություն» տերմինը երբեք էլ ստույգ կերպով չի արտահայտել այս խնդրի թեժ բնույթը) կրկին դուրս է եկել վերահսկողությունից և վատ է անդրադառնում Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության ու Մինսկի խմբի վրա, որի համանախագահներն են Ռուսաստանը, ԱՄՆ-ը և Ֆրանսիան:

Թեև նախագահ Էմանուել Մակրոնը կարող է այլ կարծիք ունենալ, բայց Ֆրանսիան, նույնիսկ լինելով ԵՄ ներկայացուցիչ, ազդեցության սահմանափակ լծակներ ունի: Բայց ԱՄՆ-ը, անշուշտ, կարող էր ավելին անել, որպեսզի նպաստեր այն խնդրի լուծմանը, որին սերտորեն առնչվում էր հետխորհրդային ժամանակաշրջանում: Սակայն իրականությունն այն է, որ Վաշինգտոնի հետաքրքրության բացակայությունը բխում է Թրամփի վարչակազմի՝ միջազգային հարցերում չներգրավվածությունից և դրա արդյունքում՝ խնդիրների լուծման համար ժամանակին առկա արդյունավետ դիվանագիտական կառույցների փոխարեն «վակուումի» առաջացումից: Եվ, ինչպես Բելառուսի և Ուկրաինայի պարագայում, այժմ ևս Թրամփը տարօրինակ կերպով խուսափում է Պուտինին մարտահրավել նետելուց:

Այս հակամարտության աշխարհաքաղաքական և ռազմավարական բոլոր ուղղությունների ֆոնին հեշտ է մոռանալ մարդկային պայքարի ազդեցությունը: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատար Միշել Բաչելետն անցյալ շաբաթ դատապարտեց երկու կողմերի հրետանային հարվածները, որոնց արդյունքում զոհվեցին, վիրավորվեցին և ահաբեկվեցին անպաշտպան մարդիկ: Նա Հայաստանին և Ադրբեջանին, ինչպես նաև «հակամարտության կողմերի վրա ազդեցություն ունեցող պետություններին» հիշեցրեց քաղաքացիական բնակչությանը պաշտպանելու՝ միջազգային մարդասիրական իրավունքով սահմանված իրենց պարտավորության մասին:

Հուսանք, որ մեծ տերությունները վերջապես քայլ կանեն: Միգուցե հրադադարը պահպանվի, և խաղաղ բանակցությունները հանգեցնեն մշտական զինադադարի: Բայց առանց այս հարցի ամբողջական և վերջնական կարգավորմանն ուղղված միջազգայնորեն համաձայնեցված համառ ճնշման Լեռնային Ղարաբաղի հակամարտության ժամանակային ռումբը շարունակելու է զարկել:

Թարգմանությունը՝ Մելինե Պապոյանի

Ղեկավար՝ Անահիտ Մկրտչյան